

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻԴՆԵՅԻ ՀԱՄԱՐ

COMMUNITY TRANSPORT



Easy Transport
1800 035 262
www.easytransport.org.au

“Easy Transport” համայնքային տրանսպորտի այլընտրանքը ստեղծված է տներում առանձին ապրող այն մարդկանց համար, որոնք՝

- տարեց են՝ 65 տարեկանից բարձր,
- հաշմանդամ են,
- այդ մարդկանց խնամողներն են:

Համայնքային տրանսպորտային ծառայություններ

Ծառայությունները տրամադրվում են մարդատար ավտոմեքենաներով կամ միկրոավտոբուսներով՝ բժշկի այցեր կատարելու, խանութում առևտուր անելու կամ հասարակական միջոցառումներին հաճախելու նպատակով: Տարեց մարդկանց և հաշմանդամներին սպասարկելու համար հատուկ պատրաստում անցած վարորդները ուղևորներին հասցնում են դռնից դուր: Մեքենաներից շատերը հարմարեցված են հաշմանդամային սայլակների համար:

Համայնքային տրանսպորտային ծառայությունների գները

Համայնքային տրանսպորտի մատակարարները շահույթ չհետապնդող կազմակերպություններ են, որոնք ֆինանսավորում են ստանում դաշնային և պետական կառավարությունների կողմից «Տնային և համայնքային խնամքի» (HACC) ծրագրի շրջանակներում:

Համայնքային տրանսպորտի մատակարարները ուղևորներից չնչին վաճառված են գանձում մատուցած ծառայության համար: Սակայն հաճախորդներին ծառայությունը չի մերժվի նույնիսկ այն դեպքում, եթե նրանք վճարումնակ չլինեն: Խնամողները կարող են առանց հավելավճարի ուղեկցել տարեց կամ հաշմանդամ ուղևորներին:

Ինչպես կապվել Համայնքային տրանսպորտի հետ Հյուսիսային Սիդնեյում

Դուք պետք է կապվեք Ձեր տեղական Համայնքային տրանսպորտի մատակարարի հետ՝ հեռախոսով գնահատում անցկացնելու համար: Գնահատման արդյունքում կպարզվի, թե արդյոք Դուք իրավասու եք օգտվել այդ ծառայություններից:

Ձանգահարեք ստորև նշված տեղական ինքնավարությունների համարներով ըստ Ձեր բնակության վայրի.

Հորնսբի (Hornsby) – Կու-րինգ-գայ (Ku-ring-gai)	9983 1611
Հյուսիսային Սիդնեյ – Մոսման – Լեյն Բոյ (Lane Cove) – Ուիլլուբի (Willoughby)	9438 3504
Մոսման (Mosman)	9978 4120
Ռայդ (Ryde) – Հանթերս Հիլ (Hunters Hill)	9816 5000
Մենլի (Manly) – Ուարինգա (Warringah) – Փիթուոթեր (Pittwater)	9971 5110

Հեռախոսային թարգմանչական ծառայություն

Ձանգահարեք՝ 131 450, օրեկան 24 ժամ, 7 օր, տեղական զանգի գնով:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Easy Transport՝ 1800 035 262,
էլ. փոստ՝ info@easytransport.org.au կամ այցելեք՝ www.easytransport.org.au

Այս բրոշյուրը պատրաստվել է Accessible Bridge Services Inc կողմից

NSW նահանգի և Ավստրալիայի կառավարությունների ֆինանսավորմամբ՝ Տնային և համայնքային խնամքի ծրագրի շրջանակներում